# ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ «ԱՆԱՊԱՀՈՎ» ՊԱՏԿԵՐԸ

DOI: 10.52174/2579-2989_2024.4-79

**Հիմնաբառեր.** *պարենային ապահովություն, պարենային կարիքներ, կայուն զարգացում, պարենի հասանելիություն, խորացող անհավասարություն*

**Անի ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Տնտեսագիտության թեկնածու

*2011 թ. ավարտել է ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղը և 2013 թ. ընդունվել ՀՊՏՀ ասպիրանտուրա: 2017 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը և ստացել տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան:*

*2015-2016 թթ. դասավանդել է ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղում: 2016 թ.-ին աշխատանքի է անցել «Ամբերդ» հետազոտական կենտրոնում: 2017 թ.-ից մինչ օրս դասավանդում է ՀՊՏՀ վիճակագրության ամբիոնում:*

*ORCID - https://orcid.org/0000-0002-6883-455X*

*Աշխարհաքաղաքական զարգացումների ներկայիս փուլում համաշխարհային տնտեսության կարևորագույն մարտահրավերներից մեկը պարենային ապահովությունն է, որը մշտապես միջազգային տարբեր կառույցների ուսումնասիրության դիտակետում է: Չնայած տնտեսական առաջընթացին՝ պարենային ապահովության հիմնահարցերը տարեցտարի խորանում են: COVID-19 համավարակի հետևանքով պարենային ապահովության մակարդակի կտրուկ անկումից հետո աշխարհին դեռևս չի հաջողվել վերադառնալ մինչհամավարակային մակարդակին:*

*2023 թ.-ին պարենային ապահովության վիճակն ավելի է վատթարացել ինչպես ողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում: Պատկերն ավելի մտահոգիչ է հատկապես ՀՀ գյուղական բնակավայրերում, որտեղ բնակչության պարենային կարիքների բավարարման հիմնահարցը բավական սրվել է: Չորս տնային տնտեսություններից մեկը պարենային կարիքները հոգում է պարտքային միջոցների հաշվին, ինչը երկարաժամկետում խորացնում է պարենային անապահովությունը: Պարենային ապահովության տեսանկյունից, առավել խոցելի են երեք և ավելի երեխա ունեցող, կնոջ գլխավորությամբ, հաշմանդամ ունեցող տնային տնտեսությունները: Այս առումով, Հայաստանին դեռևս չի հաջողվել գտնել «փրկօղակ»՝ դուրս գալու պարենային անապահովության «ճահճից»:*

Համաշխարհային տնտեսությանն անկայունություն հաղորդող և տնտեսական ա-




ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

**Չափավոր և ծայրահեղ պարենային անապահովությունն աշխարհում, %, 2014-2023 թթ.**[1]

ռաջընթացը խոչընդոտող լրջագույն սպառնալիքներից է պարենային անապահովությունը:

Պարենային ապահովությունը ենթադրում է հասարակության բոլոր անդամներին բավարար քանակությամբ անվտանգ և որակյալ պարենով ապահովում, որի համար օգտագործվում են ինչպես երկրում արտադրվող, այնպես էլ ներմուծվող և օգնության կարգով ստացվող պարենային մթերքները[2]: Այս առումով, պարենային անապահովությունը մարդկության կարևորագույն մարտահրավերներից է, որը խաթարում է տնտեսության կայուն զարգացման հիմքը: Վերջին տարիներին COVID-19 համավարակով, ռուս-ուկրաինական պատերազմով և առանձին տարածաշրջաններում բախումներով պայմանավորված արտաքին շոկերը հանգեցրել են պարենային անբավարարության հիմնահարցի սրմանն աշխարհում:

2023 թ.-ին պարենային անապահովության մակարդակն աշխարհում գերազանցել է նույնիսկ մինչհամավարակային ցուցանիշը: Այսպես՝ աշխարհի բնակչության 28,9%-ը ծայրահեղ և չափավոր պարենային անապահով վիճակում է, այլ կերպ ասած՝ 2,33 մլրդ մարդ կանոնավոր կերպով պարենին հասանելիություն չունի: Ընդ որում, աշխարհի բնակչության 10,7%-ը ծայրահեղ պարենային անապահով վիճակում է, և այս ցուցանիշը բարձր է 2019 թ.-ի նույնանուն ցուցանիշից (9.1%) (գծապատկեր 1):

Պարենային անապահովության մակարդակով տարածաշրջաններից առաջատարն Աֆրիկան է, որտեղ ծայրահեղ և չափավոր պարենային անապահով բնակչության տեսակարար կշիռը (58%) գրեթե երկու անգամ գերազանցում է աշխարհի միջին ցուցանիշը: Մինչդեռ Ասիայի, Լատինական Ամերիկայի և Կարիբյան ավազանի երկրների նույնանուն գնահատականները համեմատաբար ցածր են աշխարհի միջին մակարդակից: Այս առումով, նկատելի առաջընթաց գրանցել են Լատինական Ամերիկայի և Կարիբյան ավազանի երկրները, որտեղ ծայրահեղ և չափավոր պարենային անապահովությունը 2022 թ.-ի 31,4%-ից 2023 թ.-ին կրճատվել է՝ դառնալով 28,2%, իսկ միայն ծայրահեղ պարենային անապահովությունը՝ 2022 թ.-ի 11%-ից 2023 թ.-ին նվազել է 8,7% (գծապատկեր 2):

Պարենային ապահովության տեսանկյունից, բևեռացվածությունն առավել ակնառու է դառնում, երբ դիտարկում ենք պա-

[1] Աղբյուրը՝ The State of Food Security and Nutrition in the World 2024 Financing to end hunger, food insecurity and malnutrition in all its forms, FAO, IFAD, UNICEF, WFP and WHO, Rome, 2024, page 13, https://openknowledge.fao.org/server/api/core/bitstreams/ffb79f08-bf03-404a-9ad3-f8ef9c3c9e6b/content/cd1254en.html#gsc.tab=0

[2] Աղբյուրը՝ Ս. Ս. Ավետիսյան, Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության հրատապ խնդիրներ, Երևան, «Տնտեսագետ», 2014, էջ 16, https://asue.am/upload/files/amberd-economic-policy/Avetisyan_S.pdf




ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

**Չափավոր և պարենային անապահովությունն ըստ տարածաշրջանների, %, 2014-2023 թթ.[3]**

ռենային անապահովության աշխարհագրական կառուցվածքը: Պարենային անբավարարության մակարդակն ավելի բարձր է գյուղական բնակավայրերում: Աշխարհում գյուղական բնակավայրերի չափավոր և ծայրահեղ պարենային անապահովությունը 31,9% է, մինչդեռ քաղաքային բնակավայրերինը՝ 25,5%: Այս առումով, բացառություն են Հյուսիսային Ամերիկայի և Եվրոպայի տարածաշրջանները, որտեղ քաղաքային բնակավայրերի և՛ ծայրահեղ, և՛ չափավոր պարենային անապահովության ցուցանիշները բարձր են գյուղական բնակավայրերի նույնանման ցուցանիշներից:

Պատկերը բավական հետաքրքրական է, երբ դիտարկում ենք պարենային անապահովության ցուցանիշներն ըստ եկամտի տարբեր մակարդակ ունեցող երկրների խմբերի: Աղյուսակ 1-ից կարելի է նկատել, որ երկրների բոլոր խմբերում, բացառությամբ բարձր եկամուտ ունեցող երկրների խմբի, գյուղական բնակավայրերի պարենային անապահովության ցուցանիշները բարձր են քաղաքային բնակավայրերի նույնանուն ցուցանիշներից: Մինչդեռ բարձր եկամուտ ունեցող երկրներում պատկերը

ԱՂՅՈՒՍԱԿ 1

**Եկամտի տարբեր մակարդակ ունեցող երկրներում ծայրահեղ և չափավոր պարենային անապահովությունն ըստ բնակավայրերի, %, 2023 թ.[4]**

| | | Ծայրահեղ պարենային անապահով. | Չափավոր պարենային անապահով. |
|---|---|---|---|
| **Ցածր եկամուտ ունեցող երկրներ** | *Գյուղական բնակ.* | 24.9 | 38.8 |
| | *Քաղաքային բնակ.* | 22.8 | 37.2 |
| **Միջինից ցածր եկամուտ ունեցող երկրներ** | *Գյուղական բնակ.* | 17.8 | 27.8 |
| | *Քաղաքային բնակ.* | 16.1 | 24.6 |
| **Միջինից բարձր եկամուտ ունեցող երկրներ** | *Գյուղական բնակ.* | 3.5 | 12.9 |
| | *Քաղաքային բնակ.* | 2.7 | 9.0 |
| **Բարձր եկամուտ ունեցող երկրներ** | *Գյուղական բնակ.* | 1.5 | 6.3 |
| | *Քաղաքային բնակ.* | 2.2 | 7.2 |

[3] Աղբյուրը՝ The State of Food Security and Nutrition in the World 2024: Financing to end hunger, food insecurity and malnutrition in all its forms, FAO, IFAD, UNICEF, WFP and WHO, Rome, 2024, page 13, https://openknowledge.fao.org/server/api/core/bitstreams/ffb79f08-bf03-404a-9ad3-f8ef9c3c9e6b/content/cd1254en.html#gsc.tab=0

[4] Աղբյուրը՝ The State of Food Security and Nutrition in the World 2024 Financing to end hunger, food insecurity and malnutrition in all its forms, FAO, IFAD, UNICEF, WFP and WHO, Rome, 2024, page 13, https://openknowledge.fao.org/server/api/core/bitstreams/ffb79f08-bf03-404a-9ad3-f8ef9c3c9e6b/content/cd1254en.html#gsc.tab=0




ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

**Կանանց և տղամարդկանց շրջանում չափավոր և ծայրահեղ պարենային անապահովությունը, %, 2015-2023 թթ.[5]**

հակառակն է. քաղաքային բնակավայրերում ծայրահեղ և չափավոր պարենային անապահովության մակարդակն է գերազանցում գյուղական բնակավայրերի նմանօրինակ ցուցանիշները: Այսպես՝ 2023 թ.-ին բարձր եկամուտ ունեցող երկրներում գյուղական բնակավայրերի ծայրահեղ և չափավոր պարենային անապահովության ցուցանիշները կազմում են համապատասխանաբար՝ 1,5% և 6,3%, իսկ քաղաքային բնակավայրերում՝ 2,2% և 7,2%:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ 2015 թ.-ից ի վեր կանանց շրջանում պարենային անապահովությունը շարունակաբար գերազանցում է տղամարդկանց շրջանում պարենային անբավարարության մակարդակը: Այսպես՝ աշխարհում չափավոր և ծայրահեղ պարենային անապահովության մասով գենդերային խզումը 2019 թ.-ի 1,4%-ից 2021 թ.-ին աճել է 3,6%-ի, իսկ միայն ծայրահեղ պարենային անապահովության դեպքում՝ 0,6%-ից հասել է 2,3%-ի: Հետագայում՝ համավարակի բացասական հետևանքների թուլացման արդյունքում, չափավոր և ծայրահեղ պարենային անապահովության տեսանկյունից, գենդերային ճեղքվածքը նշանակալիորեն կրճատվել է՝ 2022 թ.-ին կազմելով 2,3%, իսկ արդեն 2023 թ.-ին՝ 1,3% (գծապատկեր 3):

Ինչ վերաբերվում է Հայաստանին, ապա, ըստ Պարենի համաշխարհային ծրագրի (ՊՀԾ) «Հայաստանում պարենային ապահովության և խոցելիության գնահատման» 2023 թ.-ի զեկույցի, 2023 թ. հունվարի դրությամբ տնային տնտեսությունների 30%-ը գտնվել է պարենային անապահով վիճակում, որը 7 տոկոսային կետով աճել է 2022 թ.-ի հուլիսի նկատմամբ[6], ինչը վկայում է, որ մեր երկրում պարենային անապահովության հիմնահարցը գնալով սրվում է: 4274 տնային տնտեսությունների շրջանում իրականացված հարցումների արդյունքում պարզվել է, որ Հայաստանում 5 տնային տնտեսություններից ընդամենը մեկն է պարենային ապահով վիճակում[7]:

Պարենային ապահովության «գորշ» պատկերն ակնառու է դառնում հատկապես այն ժամանակ, երբ դիտարկում ենք պարենային ապահովության տարածքային կառուցվածքը: Հայաստանի գյուղա-

[5] Աղբյուրը՝ The State of Food Security and Nutrition in the World 2024: Financing to end hunger, food insecurity and malnutrition in all its forms, FAO, IFAD, UNICEF, WFP and WHO, Rome, 2024, page 13, https://openknowledge.fao.org/server/api/core/bitstreams/ffb79f08-bf03-404a-9ad3-f8ef9c3c9e6b/content/cd1254en.html#gsc.tab=0

[6] Աղբյուրը՝ Armenia, Annual Country Report 2023, Country Strategic Plan 2019-2025, էջ 8, https://docs.wfp.org/api/documents/WFP-0000157691/download/?_ga=2.79591060.1272975709.1725956427-172178181.1719818587

[7] Աղբյուրը՝ Fifth Food Security and Vulnerability Assessment in Armenia, World Food Programme, December 2022 – January 2023, page 14, https://docs.wfp.org/api/documents/WFP-0000151180/download/?_ga=2.162281980.1753848528.1727431737-172178181.1719818587




ԳԾԱՊԱՏԿԵՐ 4

**Պարենային ապահովության ցուցանիշներն ըստ մարզերի, %, 2023 թ.-ի հունվար[8]**

կան բնակավայրերում պարենային անապահովության մակարդակը 34% է (առանձին բնակավայրերում՝ մոտ 40%), իսկ քաղաքային բնակավայրերում՝ 28%[9]: Համեմատության համար նշենք, որ միջինից բարձր եկամուտ ունեցող երկրների դեպքում գյուղական բնակավայրերում պարենային անապահովության մակարդակը 16,5% է, իսկ քաղաքային բնակավայրերում՝ 11,7%: Այս առումով, Հայաստանը նկատելիորեն հետ է մնում միջինից բարձր եկամուտ ունեցող երկրների խմբից՝ համապատասխան ցուցանիշներով, ինչը, ըստ ՊՀԾ գնահատումների, գերազանցապես պայմանավորված է բնակչության ցածր գնողունակությամբ և եկամուտների անհավասարաչափ բաշխմամբ:

Հայաստանում պարենային անապահովության առավել բարձր մակարդակ գրանցվել է Գեղարքունիքի (39%), Լոռու (39%), Շիրակի (36%) և Տավուշի (36%) մարզերում: Կարելի է նկատել, որ այս մարզերն աչքի են ընկնում նաև աղքատության անհամեմատ բարձր մակարդակով: Փոխարենը, պարենային անբավարարության մակարդակն ամենացածրն է Երևանում (24%), Արմավիրի (27%) և Սյունիքի (27%) մարզերում:

Մտահոգիչ է այն հանգամանքը, որ բոլոր մարզերում էլ բավական մեծ է պարենային ապահովության սահմանային շեմին մոտ գտնվող բնակչության տեսակարար կշիռը: Այսպես՝ Սյունիքի և Արմավիրի մարզերում դա հասնում է 51%-ի, որը վկայում է այն մասին, որ նոր շոկերի ի հայտ գալու դեպքում բնակչության կեսը կարող է հայտնվել պարենային անապահով վիճակում (գծապատկեր 4):

Ըստ ՊՀԾ գնահատումների՝ պարենային ապահովության վրա բացասաբար են անդրադառնում նաև տնային տնտեսությունների չափերը, երեխաների քանակը և կենսաթոշակառուների առկայությունը: Այսպես՝ այն տնային տնտեսությունները, որոնք ունեն մինչև 18 տարեկան երեք և ավելի երեխա, գրեթե կրկնակի (44%) շատ են «հակված» հայտնվելու պարենային անապահովության մեջ, քան երեխա չունեցող (24%) տնային տնտեսությունները: Ընդ որում, երեխաների թվի աճի հետ մեկտեղ, մեծանում է պարենային անապահովության մեջ հայտնվելու ռիսկը (գծապատկեր 5):

Ուշագրավ է այն հանգամանքը, որ Հայաստանում պարենային ապահովության հիմնահարցն առավել զգայուն է տնային տնտեսության գլխավորի սեռի, տարիքի

[8] Աղբյուրը՝ Fifth Food Security and Vulnerability Assessment in Armenia, World Food Programme, December 2022 – January 2023, page 15, https://docs.wfp.org/api/documents/WFP-0000151180/download/?_ga=2.162281980.1753848528.1727431737-172178181.1719818587

[9] Աղբյուրը՝ Armenia, Annual Country Report 2023, Country Strategic Plan 2019-2025, էջ 8, https://docs.wfp.org/api/documents/WFP-0000157691/download/?_ga=2.79591060.1272975709.1725956427-172178181.1719818587




ԳԾԱՊԱՏԿԵՐ 5

**Պարենային ապահովությունն ըստ տնային տնտեսությունների երեխաների թվի, %, 2023 թ.-ի հունվար[10]**

և կրթական մակարդակի նկատմամբ: Այսպես՝ պարենային անբավարարությունը կնոջ գլխավորությամբ տնային տնտեսություններում հասնում է աննախադեպ՝ 33%-ի, մինչդեռ տղամարդու գլխավորությամբ տնային տնտեսություններում դա կազմում է 24%: Պարենային անապահովության վտանգն ամենաշատը սպառնում է այն տնային տնտեսություններին, որոնց գլխավորն ունի ցածր կրթական մակարդակ և բարձր տարիք: Այն տնային տնտեսությունների դեպքում, որտեղ գլխավորի տարիքն անցնում է 60-ից, առավել մեծ է (33%) պարենային անապահով վիճակում հայտնվելու հավանականությունը, քան, օրինակ, 18-59 տարեկան գլխավոր ունեցող տնային տնտեսությունների պարագայում (29%) (գծապատկեր 6):

Աղյուսակ 2-ից երևում է, որ, պարենային ապահովության տեսանկյունից, առավել




ԳԾԱՊԱՏԿԵՐ 6

**Պարենային ապահովությունն ըստ տնային տնտեսության գլխավորի սեռի, տարիքի և կրթական մակարդակի, %, 2023 թ.-ի հունվար[11]**

[10] Աղբյուրը՝ Fifth Food Security and Vulnerability Assessment in Armenia, World Food Programme, December 2022 – January 2023, page 16, https://docs.wfp.org/api/documents/WFP-0000151180/download/?_ga=2.162281980.1753848528.1727431737-172178181.1719818587

[11] Նույն տեղում:

ԱՂՅՈՒՍԱԿ 2

**Պարենային ապահովության մակարդակն ըստ տնային տնտեսությունների կառուցվածքի[12]**

| | Պարենային ապահով. | Սահմանային պարեն. ապահով. | Պարենային անապահով. |
|---|---|---|---|
| **Միայն մեկ կենսաթոշակառուից բաղկացած SS** | | | |
| *Այո* | 19% | 40% | 42% |
| *Ոչ* | 43% | 40% | 17% |
| **SS-ում հաշմանդամ երեխայի առկայությունը** | | | |
| *Այո* | 10% | 35% | 56% |
| *Ոչ* | 22% | 44% | 34% |
| **SS-ում հաշմանդամ չափահասի առկայությունը** | | | |
| *Այո* | 17% | 42% | 42% |
| *Ոչ* | 30% | 44% | 26% |
| **Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված** | | | |
| *Այո* | 9% | 42% | 50% |
| *Ոչ* | 27% | 44% | 30% |

խոցելի են հաշմանդամ ունեցող տնային տնտեսությունները, հատկապես, եթե հաշմանդամը երեխա է (56%): Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված տնային տնտեսությունների ընդամենը 9%-ն է պարենային ապահով վիճակում, որը մյուս խմբերի համեմատ ամենացածր ցուցանիշն է:

Պատկերը բավական մտահոգիչ է դառնում, երբ դիտարկում ենք պարենային առաջնային կարիքների համար տնային տնտեսությունների միջոցների հայթայթման աղբյուրները: Հայաստանի տնային տնտեսությունների 75%-ն ամսվա ընթացքում պարենին մատչելիություն ունենալու համար օգտագործել է ինչպես իր խնայողությունները (48%), այնպես էլ սննդամթերք է ձեռք բերել վարկային միջոցների (30%) և պարտքի (23%) հաշվին: Նման վարքագիծ առավելապես դրսևորել են գյուղական բնակավայրերի տնային տնտեսությունները (33%): Քաղաքային բնակավայրերի տնային տնտեսություններին ավելի բնորոշ է եղել ոչ պարենային ծախսերի կրճատումը՝ ի հաշիվ առողջապահական և կրթական ծառայությունների (38%): Ըստ այդմ՝ գյուղական բնակավայրերում ոչ ֆորմալ պարտքի[13] բավական բարձր մակարդակ է գրանցվել՝ կազմելով 44%, որը ավելի քան երեք անգամ գերազանցում է Երևանի նույնանման ցուցանիշը (14%): Հարկ է նշել նաև, որ եթե պարենային անապահովության սահմանային շեմին մոտ գտնվող տնային տնտեսությունների 29%-ն է պարտք վերցնում սննդամթերք ձեռք բերելու համար, ապա պարենային անապահով վիճակում գտնվող բնակչության դեպքում դա հասնում է աննախադեպ՝ 55%-ի: Նմանօրինակ վարքագիծն ապահովում է կարճաժամկետ լուծումներ, և դրա շարունակականությունը երկարաժամկետում կայուն կերպով խորացնում է պարենային անապահովությունը:

Այսպիսով՝ պարենային ապահովության

[12] Աղբյուրը՝ Fifth Food Security and Vulnerability Assessment in Armenia, World Food Programme, December 2022 – January 2023, page 16, https://docs.wfp.org/api/documents/WFP-0000151180/download/?_ga=2.162281980.1753848528.1727431737-172178181.1719818587

[13] Ընդգրկում է ոչ ֆինանսական ինստիտուտներից, օրինակ՝ հարազատներից, բարեկամներից պարտքային միջոցների ներգրավումը, ինչպես նաև խանութներում վճարման հետաձգումը:

խնդիրը մշտապես միջազգային տարբեր կառույցների, հետազոտական կենտրոնների և ինստիտուտների ուսումնասիրության առանցքում է: Մասնագիտական և հետազոտական վերջին գնահատումները վկայում են, որ COVID-19 համավարակից հետո ողջ աշխարհում պարենային ապահովության վիճակը զգալիորեն վատթարացել է, և աշխարհին դեռևս չի հաջողվել վերադառնալ մինչհամավարակային մակարդակին: Դրան «նպաստել» են նաև ռուս-ուկրաինական պատերազմը, բախումներն առանձին տարածաշրջաններում, ինչպես նաև կլիմայի փոփոխությունը:

Եկամուտների ցածր և միջին մակարդակ ունեցող երկրների խմբում, քաղաքային բնակավայրերի համեմատ, պարենային անապահովության մակարդակը բարձր է գյուղական բնակավայրերում: Մինչդեռ բարձր եկամուտ ունեցող երկրներում գյուղական բնակավայրերի պարենային ապահովությունն ավելի քիչ խնդրահարույց է:

Հայաստանում պարենային ապահովության վիճակը 2020 թվականից ի վեր գնալով վատթարանում է՝ պայմանավորված ինչպես արտաքին, այնպես էլ ներքին շոկերով: Պարենային անապահովության հիմնահարցն ավելի սրությամբ դրսևորվում է հատկապես գյուղական բնակավայրերում, որտեղ դիտարկվող ցուցանիշն անհամեմատ բարձր է, քան քաղաքային բնակավայրերում: Ըստ պարենային ապահովության ցուցանիշի՝ Հայաստանը նկատելիորեն հետ է մնում միջինից բարձր եկամուտ ունեցող երկրներից: Պարենային անապահովության տեսանկյունից, առավել խոցելի են երեք և ավելի երեխա, կնոջ գլխավորությամբ, հաշմանդամ ունեցող տնային տնտեսությունները: Չորս տնային տնտեսություններից մեկը սննդամթերքի ձեռքբերման համար անհրաժեշտ միջոցներ է հայթայթում պարտքի հաշվին, որը նոր շոկերի ի հայտ գալու դեպքում կարող է դադարել, և բնակչությունը կարող է հայտնվել պարենային անապահով վիճակում: Մյուս կողմից, քաղաքային բնակչության զգալի մասն իր պարենային կարիքները հոգում է առողջապահական և կրթական ծառայությունների կրճատման հաշվին, որը հեռանկարում բացասաբար է ազդում պարենային ապահովության վրա: Այս առումով, առանցքային նշանակություն ունի ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ պետական ծրագրերի մշակումը՝ միտված անհավասարության կրճատմանը, խոցելի խմբերի պարենային կարիքների բավարարմանը, ինչպես նաև կրթական և առողջապահական ծառայությունների հասանելիության ապահովմանը: Նման ծրագրերի հետևողական կենսագործումը, անշուշտ, երկարաժամկետում կնվազեցնի պարենային անապահովության մակարդակը:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. Ս. Ս. Ավետիսյան, Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության հրատապ խնդիրներ, Երևան, «Տնտեսագետ», 2014, https://asue.am/upload/files/amberd-economic-policy/Avetisyan_S.pdf
2. Armenia, Annual Country Report 2023, Country Strategic Plan 2019-2025, https://docs.wfp.org/api/documents/WFP-0000157691/download/?_ga=2.79591060.1272975709.1725956427-172178181.1719818587
3. Fifth Food Security and Vulnerability Assessment in Armenia, World Food Programme, December 2022 – January 2023, https://docs.wfp.org/api/documents/WFP-0000151180/download/?_ga=2.162281980.1753848528.1727431737-172178181.1719818587
4. The State of Food Security and Nutrition in the World 2024:Financing to end hunger, food insecurity and malnutrition in all its forms, FAO, IFAD, UNICEF, WFP and WHO, Rome, 2024, https://openknowledge.fao.org/server/api/core/bitstreams/ffb79f08-bf03-404a-9ad3-f8ef9c3c9e6b/content/cd1254en.html#gsc.tab=0

**Ани ХАЧАТРЯН**
*Старший исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ,*
*кандидат экономических наук*

БЕЗОПАСНОСТЬ И ВЫЗОВЫ

## «НЕОБЕСПЕЧЕННАЯ» КАРТИНА ПРОДОВОЛЬСТВЕННОЙ ОБЕСПЕЧЕНОСТИ

В текущем этапе мировых геополитических изменений одним из ключевых вызовов глобальной экономики является продовольственная обеспеченность, которая неизменно находится в центре внимания различных международных организаций. Несмотря на экономический прогресс, проблемы продовольственной обеспеченности углубляются с каждым годом. После резкого ухудшения состояния продовольственной обеспеченности в результате пандемии COVID-19, мир еще не смог вернуться к уровню, предшествующему пандемии. В 2023 году состояние продовольственной обеспеченности ухудшилось как на глобальном уровне, так и в Армении. Эта проблема особенно остро стоит в сельских районах, где вопросы продовольственной обеспеченности стали наиболее актуальными. Каждое четвертое домохозяйство покрывает свои продовольственные нужды за счет долговых средств, что в долгосрочной перспективе углубляет продовольственную незащищенность. С точки зрения продовольственной безопасности, наиболее уязвимы домохозяйства с тремя и более детьми, возглавляемые женщинами, а также семьи с инвалидами. В этом контексте международным организациям до сих пор не удалось найти «спасательный круг» для выхода из «болота» продовольственной необеспеченности.

**Ключевые слова:** *продовольственная обеспеченость, продовольственные потребности, устойчивое развитие, доступ к продовольствию, углубляющееся неравенство*

**Ani KHACHATRYAN**
*Senior researcher at «Amberd» Research center, ASUE,*
*PhD in Economics*

SECURITY AND CHALLENGES

## THE “INSECURE” PICTURE OF FOOD SECURITY

In the current phase of geopolitical developments, one of the most significant challenges facing the global economy is food security, which has consistently been on the focus of investigation by various international organizations. Despite economic progress, issues surrounding food security have deepened year after year. Following a sharp decline in food security levels due to the COVID-19 pandemic, the world has yet to return to pre-pandemic levels. As of 2023, the state of food security has deteriorated both globally and in Armenia. This issue is particularly urgent in rural areas, where the challenges of meeting the food needs of the population have intensified. One in four households meets its food needs by relying on debt, which deepens food insecurity in the long term. From the perspective of food security, the most vulnerable are households with three or more children, those headed by women, and those with disabled members. In this context, international organizations have not yet found a "lifeline" to help to get out of "swamp" of food insecurity.

**Keywords:** *food security, food needs, sustainable development, access to food, widening inequality*